ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

30.09.2022 թ. կնքված թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-23/01-1 տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

16 հունվարի 2023 թ.

ք. Երևան

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Խաչատրյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Գիվարգիզյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2022 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-23/01-1 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2023 թ.-ի դեկտեմբերի 20-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությ

ունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե ք. Երևան, Արշակունյաց 7 ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900011030815 ՀՎՀՀ 02534328	«Գարանտսերվիս» ՍՊԸ Ք. Երևան, Թիբիլիսյան խճ «Կոնվերսբանկ»ՓԲԸ Հ/Հ 193004674290 ՀՎՀՀ 00840437
Գլխավոր քարտուղար ---------- Մ. Խաչատրյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն ---------- Կ. Գիվարգիզյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
30.09.2022 թ. կնքված թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-23/01-1 պայմանագրի
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ)

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատես. չ/բ համարը	գնումների պլանով նախատես.միջանցիկ ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/508	Վազ 21214-147-20	300000	330000	360000	390000	420000	450000	480000	510000	540000	570000	600000	600000	600000
3	50111130/510	Հյունդայի Տուքսոն, Կիա Սորենտո, Վոլցվագեն պասսատ	500000	680000	860000	1041000	1220000	1400000	1600000	1780000	1960000	2140000	2300000	2300000	2300000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար ---------- Մ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Գարանտսերվիս» ՍՊԸ
Ք. Երևան, Թիբիլիսյան խճ
«Կոնվերսբանկ»ՓԲԸ
Հ/Հ 193004674290
ՀՎՀՀ 00840437

Տնօրեն ---------- Կ.Գիվարգիզյան
(ստորագրություն)
Կ.Տ.